



**«ԻԽԿ 28 ՇՆՇ» ԲԲԸ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ Պետարբուրնիքի մարզ, քաղաք Վարդենիս, գյուղ Մեծ Մարտիկ  
05-065-0073-0006 կադաստրային ծածկագրով հողամասում  
իրականացված բնակելի տան, խորրանոցի և ավտոմոնակի  
շինությունների տեխնիկական վիճակի և որանց շինարարական  
աշխատանքների որակական գնահատականի վերաբերյալ**

Պետարբուրնիքի մարզ ք. Վարդենիս 2  
ԿԵՆ. +3742641 2 23 29 Բ



«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ

Գեղարքունիքի մարզ ք. Գավառ Ազատության 2  
տն: +(374264) 2 23 29 e-mail:haferdgas@mail.ru


### Ե Չ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

22 Գեղարքունիքի մարզ ,քաղաք Վարդենիս, գյուղ Մեծ Մասրիկ 05-065-0073-0006  
կադաստրային ծածկագրով հողամասում իրականացված բնակելի տան,  
խորդանոցի և ավտոտնակի շինությունների տեխնիկական վիճակի և դրանց  
շինարարական աշխատանքների որակական գնահատականի վերաբերյալ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒՄ 

Ա.ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ՝  
ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ  
ՏՆՕՐԵՆ՝



Թ. ԳԱՓՈՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԽՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ԲՊԼ-001409, 2-րդ դաս

*(նպխան, համադր. դասը)*

ՔԱՂԱՔԱՇԽՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆԵՄԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

*(բնութագրչիկության բնագավառում արժեքները, տեսակը)*

ՏՐԿԱԾ Է

2024-10-11, «ԹԻՎ 28 ՆՄՇ» ԲԲԸ

*(ըրկնագրի վայրը, այդ թվում, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ևզգանունը, ս-բնագրի անվան վայրը)*


ՀՀ, ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 2, 2ԿԱ

*(տեղ, անուն, տարիքը)*

Գործողության ժամկետը՝ 11.10.2029թ.

ՀՍԿՐՉ ՀԱՄԱՐ՝ ԱՅԶԲ-ԱՅՇԸ-5ԵՅԲ-57Բ9

Սույն փաստաթուղթը ստված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակը ներբեռնումը հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական հասնակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արտադրմանը անդամարժեքն ծածկագիրը (QR Code):



Հաստատում եմ»

«Թիվ 28 ՀԱՇ» ԲԲԸ

Տնօրեն՝

*[Handwritten signature]* Գալիոյան

*[Handwritten initials]*



**ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Վարդենիս, գյուղ Մեծ Մասրիկ 05-065-0073-0006 կադաստրային ծածկագրով հողամասում իրականացված բնակելի տան, խորդանոցի և ավտոտնակի շինությունների տեխնիկական վիճակի և դրանց շինարարական աշխատանքների որակական գնահատականի վերաբերյալ**

Աշխատանքը կատարվել է նշված հողամասի սեփականատեր Արա Մելքոնյանի առ. 08.02.2025թ. դիմումի համաձայն:

Տեխնիկական հետազննության շրջանակներում կատարվել է նշված հողամասում տեղակայված բնակելի տան, խորդանոցի և ավտոտնակի շինությունների ակնադիտական և գործիքային ուսումնասիրություն:

Հետազննությունը իրականացվել է « Երկրաշարժադիմացկուն շինարարություն, նախագծման նորմեր » ՀՀՇՆ 20,04-2020, «Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում » ՀՀՇՆ 30-01-2014-նորմերի և «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումներ »-ի N1 հավելվածի և «Շենքերի ու շինությունների վկայագրավորման(անձնագրավորման) մեթոդական ցուցումներ»-ի N2 հավելվածի համաձայն:

Բնակելի տան և հարակից շինությունների երկաթբետոնե կոնստրուկցիաների բետոնի փաստացի ամրությունները որոշվել են ընտրանքային մոտեցմամբ, չքայքայող եղանակով « Շմիդտ » տիպի ստուգաչափով, ԳՈՍՏ 22690-88 « Բետոններ. Ամրության որոշում չքայքայող մեխանիկական մեթոդով» ՀՀ Ազգային ստանդարտի պահանջներին համապատասխան:

ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի համաձայն դիտարկվող կառույցների տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում ,որտեղ սահմանված առավելագույն հորիզոնական արագացումը  $A_{max}=0.4g$  (ՀՀՇՆ20.04-ըստ հավելված 1-ի):

Բնակելի տան, խորդանոցի և ավտոտնակի շինությունների նկարագրումները ու զննման արդյունքները բերված են ստորև առանձին-առանձին:

Բնակելի տուն

Այն հարթ տեղանքի վրա 1990-ական թվականներին իրականացված ,2010 թվականին վերակառուցված ,հատակագծում ուղղանկյունաձև ուրվագծով, մոտ 11.3x12.5 մ արտաքին եզրաչափերով ,մեկ հարկանի ձեղնահարկով բնակելի գործառնական նշանակության առանձին կառույց է (նկ.1):



Նկ.1 Բնակելի տան տեսքը

Տան կոնստրուկտիվ համակարգը լուծված է երեք երկայնական կրող և լայնական պատերով, միջհարկային ծածկով ու վերնածածկով:

Տունը գլխավոր ճակատից ունի աստիճան-հարթակ համակարգ, որը լուծված է խամքարաբետոնից համակարգով և երեսպատված բազալտե սալեիկներով:

Պատերի հիմքերը ժապավենային են, միաձույլ երկաթբետոնից:

Տան պատերն իրականացված են բազալտաքարի և տուֆաքարի երկշերտ շարվածքով, միաձույլ երկաթբետոնե միջուկներով:

Պատերի վրայի պարագծով իրագործված է, միաձույլ երկաթբետոնե հակասեյսմիկ գոտի:


Պատերում բացվածքների բարավորները միաձույլ երկաթբետոնից են:

Առաջին հարկի ծածկն իրականացված է հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերով:

Առաջին հարկի և ձեղնահարկի միջև ֆունկցիոնալ կայան ապահովված է աստիճանավանդակի միջոցով, որը լուծված է միաձույլ երկաթբետոնե համակարգով:

Մանսարդի կոնստրուկտիվ համակարգը լուծված է փայտե տարրերից հիմնակմաղքով, պողպատե թիթեղից տանիքածածկույթով, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ:





Նկ.2 Խորդանոցի տեսքը

Կառույցի կոնստրուկտիվ համակարգը լուծված է երկայնական ու լայնական պատերով ու վերնածածկով:

Պատերի հիմքերը ժապավենային են ,խամքարաբետոնից:

Պատերն իրականացված են բազալտաքարի շարվածքով, ցեմենտավազային շաղախի կիրառմամբ:

Խորդանոցի վերնածածկն իրականացված է փայտե տարրերից համակարգով, կախովի առաստաղի տեսքով:

Տանիքը միալանջ է, փայտե ծպեղային համակարգով, պողպատե թիթեղից ծածկույթով, արտաքին ազատ ջրահեռացմամբ:

Չունմամբ պարզվեց հետևյալը՝

- Կառույցի կրող կոնստրուկցիաները չունեն որևէ ճաքեր, ճկվածքներ և ա տիպի վտանգավոր վնասվածքներ: Դրանք գտնվում են լավ տեխնիկակա վիճակում:
- Կառույցը գտնվում է ավարտուն վիճակում և շինարարական աշխատակատարվել են պատշաճ որակով գործող շիննորմերին համապատասխան:

Ելնելով հետազննության արդյունքներից կառույցի տեխնիկական վիճակը գնահատվում է լավ, իսկ վնասվածության մակարդակը ըստ գործող ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի և հետազննության մեթոդական ցուցումների չափորոշիչների դասվում է 1-ին աստիճան:

Հաշվի առնելով վերը նշվածը և նկատի ունենալով կառույցի բավարար տեխնիկական վիճակը եզրակացվում է՝

- ՀՀ Գեղարքունիքի մարզ ,քաղաք Վարդենիս , գյուղ Մեծ Մասրիկ 05-065-0073-0006 կադաստրային ծածկագրով հողամասում իրականացված խորհանցի կառույցը պիտանի է բնականոն ու անվտանգ շահագործման համար:

#### Ավտոտնակ

Այն հարթ տեղանքի վրա 2010 թվականին իրականացված հատակագծում ուղղանկյունաձև ուրվագծով, մոտ 5,2 x13,1 մ արտաքին եզրաչափերով մեկ հարկանի առանձին կառույց է (նկ.3):



Նկ.3 Ավտոտնակի տեսքը